# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ


*Հասցե : , ՀՀ, ՄԵԾԱՄՈՐ*
*168*

*Հեռախոս: 34441*
*Ֆաքս: 34441*


*Ելից* ____________
03 ապրիլի 2012 թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ եմ ներկայացնում Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 26-ի թիվ 02 նիստի որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ ՄՔ/3150-12
«04» 04 2012 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ 11

26 մարտի 2012թ

### ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 26-ի թիվ 02 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

| | | |
|---|---|---|
| Առաքելյան | Ժան | Ժիրայրի |
| Արտենյան | Արմեն | Ռուբենի |
| Երանոսյան | Արտակ | Սասունիկի |
| Զաքարյան | Աշոտ | Ազատի |
| Հովհաննիսյան | Գևորգ | Հենրիկի |
| Ղազարյան | Արմեն | Սլավիկի |
| Մկրտչյան | Աշոտ | Մկրտչի |
| Մովսիսյան | Արմենակ | Արմենակի |
| Սահակյան | Սերգեյ | Ալեքսանդրի |
| Փանոսյան | Մնացական | Վոլոդիայի |
| Փոթուրյան | Մեսրոպ | Խաչիկի |

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հ ա վ ե լ վ ա ծ
Մեծամոր քաղաքային համայնքի
ավագանու 2012 թվականի մարտի 26 -ի թիվ 02
նիստի թիվ 11 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Մեծամոր քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Չեկ.Ռ.Գրիգորյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ 12-Ն

26 մարտի 2012թ

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 07 նիստի «Մեծամոր քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

1)Վարչական բյուջեի եկամտային մասում 2012 թվականի նախատեսված դոտացիայի թիվը /132030,0/ հազար դրամ փոխարինել /132012,7/ հազար դրամ, այլ եկամուտների մասով՝ մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող այլ վճարներ /2300,0/ հազար դրամ փոխարինել /2317,3/ հազար դրամ, նախատեսնել պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիա/ 1722,2 հազար դրամ՝ արվեստի դպրոցում ազգային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցում:

2)Վարչական բյուջեի ծախսային մասում «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 5, դաս 1 4637 հոդվածով նախատեսնել 1722,2 հազար դրամ, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 250,0 հազար դրամ ուղղել «Ընդհանուր բնույթի ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 3, դաս 2 4232 հոդվածին, 2750,0 հազար դրամ ուղղել Ֆոնդային բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն ծրագրի բաժին 08, խումբ1, դաս1, 5112 հոդվածին հանգստի գոտում խորքային հոր կառուցելու համար «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10, խումբ 7, դաս 1, 4729 հոդվածից պակասեցնել 50,0 հազար դրամ և ավելացնել «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 4, դաս 1, 4729 հոդվածին 50,0 հազար դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | |
|---|---|---|
| Առաքելյան | Ժան | Ժիրայրի |
| Արտենյան | Արմեն | Ռուբենի |
| Երանոսյան | Արտակ | Սասունիկի |
| Զաքարյան | Աշոտ | Ազատի |
| Հովհաննիսյան | Գևորգ | Հենրիկի |
| Ղազարյան | Արմեն | Սլավիկի |
| Մկրտչյան | Աշոտ | Մկրտչի |
| Մովսիսյան | Արմենակ | Արմենակի |
| Սահակյան | Սերգեյ | Ալեքսանդրի |
| Փանոսյան | Մնացական | Վոլոդիայի |
| Փոթուրյան | Մեսրոպ | Խաչիկի |

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ